

Իրմէ ժամանակով շատ վերջը Եթովպիա ճամբորդողներ շատ աւելի անհեթեթ և անճիշտ տեղեկութիւններ տուած են: Յովհաննէս Թիւթիւնճի հակառակ իր զգուշաւորութեան, դժբախտաբար սխալ տեղեկութեանց զո՛հ գացած է երբեմն, և անգիտակցաբար արձագանգ եղած անոնց:

Այսպէս՝ Քօւէյրէն Սուաքին 30 օրուան ծովագնացութիւնը պատմելէ յետոյ (տող 12), կ'աւելցնէ թէ այդ երկար ճամբուն վրայ տեսած է տեսակ տեսակ մարդիկ. կարճահասակ և գէր, որոնք հողամշակութեան անտեղեակ՝ միայն ձուկ ու գազաններ ուտելով կ'սպրէին կամ մարդակեր էին (14—18):

Այս տեղեկութիւնները «ի լրոյ» ժողվուած են, քանի որ ինք ծովու վրայ էր և ցամաքին վրայ եսածներուն տեղեակ չէր կրնար ըլլալ. ուստի՝ կարելի է ենթադրել, թէ կրնան սխալներ սպրդած ըլլալ, բայց բոլորովին սուտ ալ չեն:

Նոյնպէս իրեն հայթայթուած սխալ տեղեկութեան մը զօ՛ր կարելի է նկատել զինք, երբ կը հաւաստէ թէ կարմիր ծովու մէջ անցած է քովէն մարգարիտի կղզիին և զմրուխտի լերան (18—19): Ճիշդ է, որ կարմիր ծովու մէջ գտնուած կղզիները մարգարիտի որսորդութեան կայաններ են, սակայն զըմրուխտի լեռը առասպելաբանութիւն մըն է, զոր հաւատացուցեր են իրեն:

Նոյնպէս իր միախառնութիւնը շահագործած են Հապէշները՝ հաւատացնելով, որ իրենց այն ժամանակի թագաւոր-կայսեր բազուկին օսկորը մէկ է, փոխանակ երկուքի և թէ որքան թագաւորներ որ իշխած են իր ցեղէն, ամէնքն ալ այդպէս էին (98-100): Իսկ իր հաւաստումը, թէ թագաւորը շատ անձնեայ և